From *Patma-banasirakan handes* [Historico-Philological Journal], 1(1970), pp. 151-163.

ԲՅՈՒԶԱՆԴԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

(ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ*)

ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ (Փարիզ)

Սույն գիտական նստաշրջանի ծրագրում ընդգրկված է նաև «Բյուզանդիայի պատմությունը, մասնավորապես նրա հարաբերությունները Հայաստանի հետ» թեման, որի նյութերը շատ ընդարձակ են, որովհետև դարերի ընթացքում այդ երկու երկրները սերտորեն կապված են եղել իրենց պատմությամբ։ Առանց դույզն չափազանցության կարելի է ասել, որ չկա Բյուզանդիայի պատմության ուսումնասիրություն, որտեղ նկատի առնված չլինի Հայաստանը, և նույնպես չկա Հայաստանի պատմության որևէ ուսումնասիրություն, որտեղ չխոսվի Բյուզանդիայի մասին։ Հետազոտությունների ներկա վիճակի և առաջադրվող խնդիրների մասին այս հաղորդման մեջ ես հավակնություն չունեմ դրանց լրիվ պատկերը կամ ամբողջական մատենագիտությունը ներկայացնելու. ես կաշխատեմ ուրվագծել, ավելի շատ կանգ առնելով մի քանի խնդիրների վրա։

Հայ-բյուզանդական հարաբերությունների և Բյուզանդիայում հայերի դերի ուսումնասիրության ասպարեզում Ն. Ադոնցի աշխատությունները առաջնակարգ տեղ են գրավում։ Այդ հարաբերությունների որոշ կողմեր նա արդեն քննության էր առել 1908 թ. լույս տեսած իր «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» աշխատության մեջ։ Հետագայում Փարիզում և Բրյուսելում անցկացրած տարիներին նրա հետազոտությունները գլխավորապես կենտրոնացել են հայկական ծագում ունեցող կայսրերի և հայ մեծ ընտանիքների վրա, որոնք դեր են խաղացել Բյուզանդիայի կառավարման և քաղաքական կյանքի մեջ։ Թեև նրա եզրակացություններից մի քանիսը չհամոզեցին մասնագետներին, սակայն հետազոտությունների ազդեցությունն ամբողջությամբ վերցրած շատ մեծ է եղել. դրանք ցույց տվեցին, ի միջի այլոց, հայկական աղբյուրների կարևորությունը, որոնք երբեմն ամբողջապես լրացնում են հունական աղբյուրները։

Նորագույն ուսումնասիրությունների մասին խոսելուց առաջ հարկավոր է նշել Ժ. Լորանի նպաստը հայ-բյուզանդական ուսումնասիրություններին թե՛ «L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'à en 886» *(«Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև, արաբական նվաճումից մինչև 886 թ.») գրքում և թե՛ Կիլիկիայի ու հարևան շրջանների հայ իշխանների մասին գրած հոդվածներում։*

Պետեր Խարանիսը «The Armenians in the Byzantine Empire» *(«Հայերը բյուզանդական կայսրության մեջ») աշխատության մեջ, որ ընդգրկում է*

---

* *Զեկուցում՝ կարդացված պատմաբանների սովետա-ֆրանսիական չորրորդ կոնֆերանսում։*

Հուստինիանոսի իշխանությունից մինչև XIII դ. ընկած ժամանակաշրջանը, ի մի է բերել նախորդ հետազոտությունների արդյունքները և դրանք հարըստացրել բյուզանդական և արևելյան աղբյուրների սեփական հետազոտություններով։ Նա քննել է հայերի արտագաղթերի և հարկադրական տեղափոխությունների հետևանքով կայսրության ցեղային կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունները. նշել է նաև հայերի բնակեցման շրջանները։ Նա ցույց է տվել հայերի մասնակցությունը Բյուզանդիայի ռազմական հզորացմանը, խոսել է հայկական ծագում ունեցող կայսրերի ու ընտանիքների մասին և ուշադրություն հրավիրել Բյուզանդիայի մտավոր կյանքում հայերի կատարած դերի վրա։ Թույլ տվեք մի քանի նախադասություն մեջ բերեմ նրա եզրակացությունից. «Համարյա հինգ հարյուր տարի շարունակ,— գրում է նա,— հայերը կարևոր դեր են խաղացել կայսրության քաղաքական, ռազմական և վարչական կյանքում... Այդ ժամանակաշրջանի սկզբում, VII—VIII դդ., երբ կայսրությունը պայքարում էր սեփական գոյության համար, նրանք լայնորեն մասնակցել են նրա թշնամիներին ետ մղելուն։ Բայց նրանց դերը հատկապես աչքի է ընկնում IX—X դդ., երբ որպես զինվոր, սպա, կառավարիչ և կայսր, նրանք գերիշխել են կայսրության հասարակական, ռազմական և քաղաքական կյանքում, այն կայսրության, որն իր մեծությունը լայն չափով պարտական է հայերին։ Նրանց դերն իսկապես այնքան մեծ է եղել այն ժամանակ, որ բյուզանդական կայսրության այդ երկու դարերը կարելի է համարել հունահայկական. հունական, որովհետև նրա քաղաքակրթությունը եղել է, ինչպես միշտ, հունական. հայկական, որովհետև նրանք, որոնք տնօրինում էին նրա բախտը և հայթայթում նրան պաշտպանող ուժերի մեծագույն մասը, գլխավորապես հայեր կամ հայկական ծագում ունեցող մարդիկ էին»։

Այսպիսով, հայ-բյուզանդական հարաբերությունների ընդհանուր պատկերն արդեն ուրվագծված էր, բայց դեռևս շատ հարցեր մնում էին լուսաբանման կարոտ։ Կիրիլ Թումանովը Օքսֆորդի բյուզանդագիտական միջազգային համագումարում կարդացած զեկուցման մեջ, որտեղ տվել է հայ-բյուզանդական հարաբերությունների ընդհանուր պատկերը մինչև Մանազկերտի ճակատամարտը, ընդգծել է բյուզանդական քաղաքակրթության երեք գործոն կամ կողմ, որոնց մեջ, նրա կարծիքով, արտահայտվում է հայկական կամ կովկասյան տարրերի և սովորույթների ազդեցությունը, այն է՝ զինվորական բանակաթեմերի սիստեմի կազմակերպումը, Անատոլիայում մեծ կալվածների զարգացումը և կայսերական իշխանության ժառանգական հաջորդականության գաղափարը։ Կայսրության վարչական և հասարակական կազմակերպման հիմնական հարցերին վերաբերող այս տեսակետները չենք կարող բավարար չափով զարգացնել մի հաղորդման մեջ. անտարակույս դրանք կարող են ավելի խոր ուսումնասիրությունների նյութ դառնալ։

Մի քանի ուսումնասիրություններ նոր տեղեկություններ հաղորդեցին հայկական ծագում ունեցող բյուզանդական ընտանիքների մասին։ Ամենից կարևորները վերաբերում են զորավար Կեկավմենոսին, որ 1075—1078 թթ. շարադրել է իր «Խորհուրդներ և պատմվածքներ» աշխատանքը։ Հ. Բարթիկյանի և Կ. Յուզբաշյանի հոդվածները, պրոֆ. Լըմերլի դիտողությունները լուսաբանում են Կեկավմենոսի ծննդաբանության մինչև այդ մթին մնացած հարցեր։ Վերականգնելով այս ընտանիքի անդամների իսկական հայրանունը՝ Վիկացի և ոչ թե Կիխկացի, և տեղորոշելով նրա ծննդավայրը՝ Վխիկ գյուղ, այդ ուսում-

նասիրությունները լրացուցիչ տեղեկություններ են տալիս այդ ընտանիքի տիրույթների մասին Տայքում՝ Արտանուջում և Թորթումի շրջակայքում։ Բյուզանդիային ծառայած հայ ընտանիքների կապակցությամբ ես ուզում եմ նշել նաև Սպեկի մեկ հոդվածը, որտեղ նա մեկնաբանում է Թեոդորոս Ստուդիտեսի նամակը՝ ուղղված ինչ-որ Եֆրոսինեի. այստեղ խոսվում է վերջինիս հոր մասին, որ IX դարի սկզբին եղել է Հելլադայի և, ավելի ուշ, Արմենիակների բանակաթեմի զորավար։ Հոդվածի հեղինակը չի կարողացել իմանալ, թե ով է եղել այդ զորավարը, որի անունը նշված չէ. բայց նա ընդգծում է Թեոդորոս Ստուդատեսի բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ։

Տայքի շրջանը՝ հայ-վրացական այդ գավառը, որ 1023 թ. պիջել են Բյուզանդիային, անցողակի նկատի է առել Սպիրոս Վրիոնիսը բյուզանդացի գավառական մեծահարուստ Եվտաթիոս Բոյիլասի 1059 թ. կազմած կտակի թարգմանության և մեկնաբանության մեջ։ Է՛լ ավելի մանրամասն ուսումնասիրելով այս կտակը, Հ. Բարթիկյանն ընդգծել է նրա կարևորությունը կայսրության արևելյան գավառների հասարակական պատմության համար, և որոշելով նշված որոշ բնակավայրերի տեղադրությունը, նա ցույց է տվել, որ Բոյիլասի կալվածները գտնվելիս են եղել Արտանուջի շրջանում։ Բոյիլասի մի քանի նախադասություններից դուրս է գալիս նաև, որ այս շրջանի հայ բնակչությունը, որ շարունակում էր հայերեն խոսել, լրիվ քաղկեդոնական չի եղել, ինչպես ենթադրվում էր, այլ նրա առնվազն մի մասը հավատարիմ է մնացել ազգային եկեղեցուն։ Տայեցի հայերին և հայ-բյուզանդական հարաբերություններին են վերաբերում նաև, որոշ չափով, Պ. Մուրադյանի և Վ. Հարությունովայի ուսումնասիրությունները՝ 1083 թ. Բուլղարիայում Գրիգոր Բակուրյանի հիմնած Պետրիցոսի (կամ Բաչկովոյի) վանքի Տիպիկոնի վերաբերյալ։ Այդ քննարկումներից երևում է, որ Գրիգոր Բակուրյանը Տայքից կամ Տայք-Կղարջքից է եղել, երկաբնակ հայ. իր Տիպիկոնը գրել է տվել հունարեն, վրացերեն և հայերեն լեզուներով, և որ հունադավան եկեղեցու կողմն անցած հայ վանականներ ընդունվել են նրա վանքը և թույլտվություն են ստացել հայերեն լեզվով աղոթելու։ Հիշեցնում եմ Կ. Յուզբաշյանի մի հոդվածը Տայքի իշխանության մասին, որ Ա. Պ. Կաժդանը նշել է «Byzantion»-ի վերջին համարում լույս տեսած իր տեղեկագրում և որին, դժբախտաբար, ես չկարողացա ծանոթանալ։

Քաղաքական պատմության վերաբերյալ կարելի է նշել Գ. Աբգարյանի ուսումնասիրությունը Սեբեոսի «Հերակլի պատմության» մասին, որ բյուզանդագետները համարում են Բյուզանդիայի յոթերորդ դարի պատմության գլխավոր աղբյուրը։ Ըստ նրա կարծիքի այդ երկը Սեբեոսի «Հերակլի պատմությունը» չէ, այլ բաղկացած է երկու տարբեր մասերից։ Հեղինակը գտնում է, որ երկի մի մասը գրվել է VII դարի պատմագիր Խոսրովի կողմից, որի աշխատությունը կորած էր համարվում, մյուսը դրան կցվել է IX դարում, հավանաբար Հովհաննես Տարոնացու ձեռքով։

Մորիկ կայսեր դեմ Սմբատ Բագրատունու ղեկավարած ապստամբության, պարսիկների դեմ հայ-բյուզանդական դաշնադրության և Վարդանանց պատերազմի ժամանակ բյուզանդացիների կողմից հայերին օգնություն մերժելու մասին Վ. Իսկանյանի երեք հոդվածներից բացի, V—VI դդ. Բյուզանդիայի և Հայաստանի հարաբերությունները քիչ են ուսումնասիրված։ Հետազոտողներն իրենց ուշադրությունն ավելի շատ կենտրոնացրել են XI դարի վրա։ Աղաջա-

նովի, Կ. Յուզբաշյանի, Մ. Կանարի ուսումնասիրությունները նոր ճշգրտումներ բերեցին Հայաստանում սելջուկ թուրքերի առաջին անգամ երևալու և 1064 թ. Ալփ Արսլանի կողմից Անիի գրավման հանգամանքների մասին։ Վ. Իսկանյանը քննության է առել Վասպուրականի թագավորության վերացման իսկական դրդապատճառները, այն է՝ Բյուզանդիայի գործադրած ճնշումը, վերացման ստույգ թվականը և բնակչության արտագաղթը։ Իսկ Հ. Պերպերյանը Կարսի թագավորության վերացումը վերագրում է ոչ թե սելջուկների հարձակման վախին, այլ նոր կաթողիկոսի ընտրությունն ապահովելու՝ Գագիկ թագավորի ցանկությանը, որին հակառակվել էին բյուզանդացիները. դրանով իսկ նա ուզում էր ազգային եկեղեցու ծոցում պահել Փոքր Ասիա գաղթած հայ բնակչությանը։ Ըստ Հ. Պերպերյանի, թագավորությունը վերացել է 1065 թ. գարնանից ոչ ուշ։ Կ. Յուզբաշյանը հրատարակելով Արիստակես Լաստիվերտցու քննական բնագիրը և ռուսերեն թարգմանությունը, վեր է հանել XI դ. այս սկզբնաղբյուրի նշանակությունը Բյուզանդիայի պատմության համար։ Դրան նախորդող մի հոդվածում նա փորձել է որոշել երկու բառի իսկական իմաստը. ըստ նրա, «փրանկ» անվան տակ պետք է հասկանալ ոչ թե ֆրանկներին, այլ վարյագներին. իսկ հայերեն «հոգ» բառը համապատասխանում է բյուզանդական «պրոնիա» տերմինին՝ XI դ. իր ունեցած իմաստով, այսինքն՝ «բանակաթեմի կառավարում» կամ «պետական գավառի հսկողություն»։

1453 թ. Կ. Պոլսի անկումը մեծապես հուզել է հայերին. այդ հուզումն արտահայտվել է Հ. Անասյանի հրատարակած և ուսումնասիրած պոեմներում, որոնցից մեկը քաղաքի առման մի ականատեսի ստեղծագործությունն է։ Այդ պոեմում դարձյալ պատմվում է կայսրի փախուստը արևմուտք և նրա ենթադրյալ վերադարձը՝ փրկարար ֆրանկ մի բանակի գլուխ անցած։

Վերջին տարիներս ամենից բուռն հետաքրքրություն առաջացրած թեմաներից մեկը պավլիկյան հերձվածող աղանդի պատմությունն է, որ հուզումներ է առաջացրել Հայաստանում և Բյուզանդական կայսրության մեջ, մանավանդ VIII և IX դդ.։ Այն աշխատությունների թվում, որ հիշեցնելու եմ իրենց հրատարակության ժամանակագրական կարգով, ուշադրության արժանի են Ե. Լիպշիցի, Կ. Յուզբաշյանի, Մ. Լոոսի, Հ. Բարթիկյանի հոդվածները, պավլիկյան շարժման ուսումնասիրության աղբյուրների վերջինիս գիրքը, Ե. Տեր-Մինասյանի «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» աշխատության պավլիկյաններին վերաբերող գլուխը և, վերջապես, Նինա Գարսոյանի «The Paulician Heresy» գիրքը, որ մինչև այժմ լույս տեսած ամենից մանրամասն ուսումնասիրությունն է։ Ես չեմ փորձի ամփոփել այս հեղինակների տեսակետները, որոնք երբեմն միանգամայն տարբեր են։ Կարծիքների տարբերությունները վերաբերում են հունական այս կամ այն աղբյուրի հավաստիությանը, հույն և հայ պատմագիրների տվյալների հարաբերակցությանը, Հայաստանում այդ աղանդի երևան գալուն և զարգացմանը, շարժման իսկ բնույթին, որը, ոմանց տեսակետից, հասարակական ապստամբություն է ազնվականության և եկեղեցական դասի ճնշման դեմ, իսկ ուրիշների կարծիքով՝ կրոնական աղանդ է։ Այդ աղանդի հենց բնորոշումը՝ դուալիստական կամ ադոպցիոնիստ, եղել է և է վիճաբանության առարկա։ Տարբեր են նաև կարծիքները պավլիկյան շարժման դերի մասին բյուզանդական պատկերամարտության ծագման և տարածման խնդրում։ Այս տեսակետից օգտակար կլիներ հաշվի առնել Կեգիի դիտողությունները, որ արտահայտել է իր

«The Byzantine armies and iconoclasm» («Բյուզանդական բանակները և պատկերամարտությունը») հոդվածում. հեղինակը տարբերել է մայրաքաղաքում կենտրոնացված ռինվորական գնդերի և բանակաթեմական բանակների աջակցությունը։

Բյուզանդիայի և Հայաստանի հարաբերությունների, պավլիկյանների պատմության համար պետք է նկատի առնել նաև Հ. Բարթիկյանի ուսումնասիրությունները բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսի վերաբերյալ, որը, ինչպես արդեն ցույց էին տվել Անրի Գրեգուարը և Ն. Ադոնցը, ծնունդ է առել պավլիկյան միջավայրում, այդ աղանդի բնօրրան գավառներում։

Բյուզանդիայի և Հայաստանի կրոնական հարաբերությունները բուն պատմության մասն են կազմում, որովհետև, դավանաբանական և ծիսակատարությունների վերաբերող բանավեճերը մի կողմ թողած, դարերի ընթացքում մղված պայքարը քաղաքական բնույթ ուներ. Բյուզանդիան ձգտում էր ձուլել հայերին՝ նրանց բերելով օրթոդոքս եկեղեցու ծոցը, իսկ հայերը ազգային, առանձին եկեղեցի պահպանելով ջանում էին պահել իրենց անկախությունը։ Այս հարցերը քննության են առնվել Բյուզանդիայի և Հայաստանի, և ավելի մասնավորապես հայ եկեղեցու պատմությանը վերաբերող աշխատությունների մեջ։ Ես ուզում եմ հիշեցնել միայն որոշակի բնագրերի վերաբերյալ նորագույն ուսումնասիրություններ։

Ամենակարևորներից են Լուվենի համալսարանի պրոֆեսոր Գարիտի հետազոտությունները, որոնք նվիրված են հունարեն այն բնագրին, որն ամենից հաճախ հիշատակվում է լատիներեն վերնագրով՝ «Narratio de rebus Armeniae», ինչպես նաև Իսահակ կաթողիկոսին վերագրվող հակահայկական գրվածքներին և քաղկեդոնիկ մի տաղարանի։ «Narratio»-ն քաղկեդոնական տեսակետից պատմում է հայ եկեղեցու հարաբերությունները բյուզանդականի հետ՝ Նիկիայի ժողովից սկսած մինչև 700 թ., և նրա անջատումը բյուզանդականից։ Քննական խորաղնին ուսումնասիրությամբ լուսաբանված կետերից մեկն այն է, որ հունարեն բնագիրը թարգմանված է կորած հայերեն մի բնագրից, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, հունադավանություն ընդունած մի հայ է եղել. Նրա ներկայացրած եկեղեցական պատմությունն անկախ է հայոց պաշտոնական պատմագրությունից և մի քանի հարցերի վերաբերյալ ներկայացնում է այնպիսի տեղեկություններ, որոնք այլուստ հայտնի չեն։ «Narratio»-ի, երկարնակ տաղարանի և նույն կարգի այլ գրվածքների տեղեկությունները բյուզանդացիներն օգտագործել են իրենց բանավեճերում և պարսավաճառերում, ինչպես Իսահակ կաթողիկոսին վերագրվող լուտանքներում, որոնք հայ կաթողիկոսի հետ ոչ մի առնչություն չունեն. դրանցից գոնե առաջինը մոտ 1050 թ. շարադրել է, ինչպես նշել է Հ. Գրյումելը, Պերիբլեպտոս վանքի հույն վանական Եվթիմիոսը։

Հենց «Narratio»-ն կախում ունի մի աղբյուրից, որ ծանոթ է եղել Փոտ պատրիարքին, որն այն օգտագործել է Զաքարիա կաթողիկոսին գրած նամակում։ IX դ. Փոտ կաթողիկոսի և հայերի նամակագրությունը բազմաթիվ ուսումնասիրությունների նյութ է դարձել, և դրան անդրադառնալու կարիք չէր լինի, եթե գոյություն չունենար մի նոր փաստ։ Թույլ տվեք միայն հիշեցնեմ, թե որոնք են այդ նամակները. Փոտի երկու նամակը, մեկը՝ հայոց Աշոտ թագավորին, մյուսը՝ Զաքարիա կաթողիկոսին, որոնց բնագրերը կորել են, և պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ։ Սահակ Մրուտի կողմից մի

պատասխան՝ Թագավորին ուղարկված նամակին, և Նիկետաս Բյուզանդացու գրած, բնագրով պահպանված պատասխանը այդ նամակին։ Գերիտը դեռ վերջերս կասկածներ է հայտնել Զաքարիայի Փոտի գրած նամակի վավերականության մասին. նա դրանում հայտնաբերել է բյուզանդական եկեղեցու պատմության վերաբերյալ սխալներ և հարց է դրել, որ եթե այդ նամակն իրոք Փոտինն է, ապա նման սխալներ ինչպե՞ս կարող էր անել բյուզանդական պատրիարքներից ամենագիտնականը։ Նամակագրության այդ ամբողջ հարցը պետք է վերանայել, երբ հրատարակվեն Փոտի երեք նամակը, որոնք հայտնաբերվել են Աթենքի ազգային գրադարանի հունարեն մի ձեռագրում։ Այդ նամակների գոյությունը հիշատակել է Դառուզեսը «Revue des Etudes Byzantines» հանդեսում 1954 թ. հրատարակված հաղորդման մեջ։ Դրանցից մեկն ուղղված է Թագավորին, և հաղորդման մեջ բերված միակ նախադասության մեջ Փոտը խոսում է Զաքարիա կաթողիկոսին իր գրած երկու նամակի մասին։ Մյուս երկու նամակները հասցեագրված են հայ համայնքին։ Այսպիսով, առաջին անգամ լինելով, ունենք Փոտի՝ հայերեն գրած նամակների բնագիրը, սակայն բախտի հեգնանքով այս անգամ հայերեն թարգմանություններն են բացակայում։ Այդ նամակների հրատարակությունը, որը, հուսանք, շատ չի ուշանա, հնարավորություն կտա վերանայելու IX դ. Բյուզանդիայի և Հայաստանի նամակագրության հարցն ամբողջությամբ և տեսնելու, ի միջի այլոց, թե այդ նամակափոխանակությունը որքանով կարող է կապ ունենալ Վասիլ I-ի ծագման կամ նույնիսկ նրա թագավորությանը նախորդող իրադարձություններին վերաբերող զրույցների հետ, այն է՝ թե իբր Կ. Պոլսում հայտնաբերվել են Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմե և Գայանե սուրբ կույսերի մասունքները։

Նոր ուսումնասիրությունները լրացուցիչ տեղեկություններ բերեցին նաև XII դ. երկրորդ կեսում տեղի ունեցած կրոնական բանակցությունների մասին։ Մի քանի աշխատությունների մեջ մանրամասն մեկնաբանվել են Մանուել կայսրի Կիլիկիա առաքած պատգամավորությունները, Ներսես Շնորհալի կաթողիկոսի և նրա հաջորդ՝ Գրիգոր IV-ի հետ նրա ունեցած նամակագրությունը։ Մինչև վերջին տարիներս կարծվում էր, թե 1180 թ. Մանուել I-ի մահով վերջ է տրվել այդ բանակցություններին, սակայն այժմ հավաստի է, որ եթե ոչ տեսակցություններ, գոնե նամակագրություն տեղի է ունեցել Իսահակ Անգելոսի իշխանության սկզբնական շրջանում։ XIII դ. հեղինակ Վարդան պատմագիրն իրոք հիշատակում է մի նամակ, որ 1186 թ. Գրիգոր IV-ն ուղարկել է Իսահակ Անգելոսին, բողոքելով կայսրության հողերում հայերի հալածանքների դեմ. սակայն այդ նամակագրության հետքն անգամ պահպանված չէ հայերեն ձեռագրերում։ Արդ, դեռևս 1884 թ. Պապադոպուլոս Կերամևսը հրատարակել էր Իսահակ Անգելոսի նամակը կաթողիկոսին, ի պատասխան վերջինիս ուղարկած երկու թղթի։ Այդ նամակը, որ վրիպել էր բոլոր նրանց ուշադրությունից, որոնք զբաղվել էին XIII դարի հակամարտություններով, հիշատակել է Հ. Բարթիկյանը, որ մեկնաբանություններով հանդերձ հրատարակել է դրա թարգմանությունը։ Հեխտը, 1958 թ. լույս տեսած այդ ուսումնասիրությունից անկախ և անտեղյակ, 1967 թ. «Byzantion» հանդեսում լույս ընծայած հոդվածում իր հերթին անդրադառնում է Իսահակ Անգելոսի նամակին։ Բացի այդ, նա տալիս է նոր տեղեկություններ՝ քաղված Նիկետաս Խոնիատես պատմագրի դեռևս անտիպ գրվածքից, որ 1189 թ. ուղղված է Ֆիլի-

պուպոլիսի հույն եպիսկոպոսին. Նրանում խոսվում է այդ քաղաքի հայ համայնքի մասին, որին կանդրադառնանք քիչ հետո։ Այդ նամակափոխանակությունը ոչ մի արդյունք չի տվել, ինչպես նաև այն, որ XIV դ. տեղի ունեցավ Կ. Պոլսի Եսայի պատրիարքի, Լևոն V-ի և կաթողիկոսի միջև։ Թերևս այս բանակցությունների շրջանակի մեջ պետք է առնել բավականին հետաքրքրական այն փաստը, որ Փոտի պատվիրակ Հովհաննես Նիկեցու ձեռքով IX դ. Զաքարիա կաթողիկոսին գրված նամակը հայերեն թարգմանվել է լոկ 1203 թ. Սիսում, Լևոն I թագավորի պահանջով։

«Narratio de rebus Armeniae»-ի մասին խոսելիս անցողակի հիշատակեցի գրվածքներ և ուզում եմ համառոտակի կանգ առնել Բյուզանդիայի և Հայաստանի գրական հարաբերությունների հարցի վրա։ Մի կողմ եմ թողնում հայերի մասնակցությունը մայրաքաղաքի մտավոր կյանքին. օրինակ՝ այն փաստը, որ Կեսար Վարդասը, որ 863 թ. Մագնավրայի պալատում վերակազմավորել է Կ. Պոլսի համալսարանը, և իր գիտությամբ հռչակված պատկերամարտ Հովհաննես Քերականը հայ են եղել, և Լևոն Մաթեմատիկոսը, որին վստահել են համալսարանի ղեկավարությունը և փիլիսոփայության ամբիոնը, կիսահայ է եղել։ Լրիվ բյուզանդականացած այդ մարդկանց դերը արձանագրվում է Բյուզանդիայի մեծությանը անհատ հայերի բերած նպաստի շրջանակում։ Ես ուզում եմ միայն նկատի առնել թարգմանությունների միջոցով կատարված գրական փոխանակումները, այն, թե ինչ կարելի է հետևցնել կատարված ընտրությունից, և այդ փոխանակումները որ չափով են կարողացել նպաստել հարևան երկրի կյանքի և մտածողության լավագույն ճանաչմանը։

Բյուզանդական կողմից արդյունքը շատ փոքր է. դա չի կարող մեզ զարմացնել, որովհետև օտար գրականությունների նկատմամբ հույների անտարբերությունը նկատել են բոլոր նրանք, որոնք ուսումնասիրել են թարգմանական գրականությունը։ Հունարեն թարգմանված առաջին գործը Ագաթանգեղոսի գիրքն է, որ Գրիգոր Լուսավորչի շնորհիվ Հայաստանում քրիստոնեություն ընդունելու պատմությունն է։ Ինչպես Գարիտն է ապացուցել իր «Documents pour l'étude du livre d'Agathange» աշխատության մեջ, այդ թարգմանությունը 464—468 թթ. կատարված է հայի ձեռքով։ Դրանից բացի գոյություն ունի ս. Գրիգորի վարքի երկու տարբերակ՝ կատարված այս անգամ հույնի կողմից։ Դրանցից մեկը, որ պահպանվել է Օխրիդի մի ձեռագրում, կապվում է հայերեն Ագաթանգեղոսի հետ, նախորդ հունարեն թարգմանությունից անկախ, որովհետև այն պարունակում է ս. Գրիգորի վարդապետության մի երկար հատված, որ չկա հունարեն Ագաթանգեղոսում։ Այդ տարբերակը ծանոթ է եղել արաբների եպիսկոպոս Գեորգին, որ դրանից հատվածներ է մեջ բերել 714 թ. գրած մի նամակում. ուրեմն այն գրված է եղել նախքան VIII դ., սակայն հնարավոր չէ ավելի ստույգ որոշել թվականը։

Հունարեն Ագաթանգեղոսի հարցն այլ է։ Թարգմանված լինելով այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայոց եկեղեցին դեռևս անջատված չէր հույն եկեղեցուց, դրա նպատակն է եղել բյուզանդացիներին ճանաչել տալ, առանց որևէ հետին մտքի, հայոց պատմության մեջ շատ մեծ նշանակություն ունեցող մի իրադարձություն։ «Narratio»-ի և արդեն հիշատակված գրվածքների խնդիրը բոլորովին այլ է։ Դրանց բնագրերն ամենայն հավանականությամբ պատկանում էին «հայերեն կորած գրականությանը», որ Հայաստանի քաղկեդոնական կուսակցությունը արտադրել էր լուսավորչական եկեղեցու դեմ պայքարելու

համար»։ Բյուզանդացիներն այդ գործերը կրոնական բանավեճերում օգտագործել են իրենց պրոպագանդայի նպատակով։

Այդ գրվածքների կողքին գոյություն ունեն ուրիշներ, գրված կամ թերևս նույնպես թարգմանված դարձյալ բանավեճի և գաղափարների տարածման այն նույն նպատակով, որոնցից երկուսը բացառիկ նշանակություն ունեն, որովհետև օգտագործել են հայ պատմագիրների երկեր։ Այդ գրվածքներից մեկը հակահայկական բուռն պարսավաճառ է, անտիպ, որ հիշատակել և համառոտ վերլուծել է Գարիտը։ «Հեղինակի աղբյուրն ըստ երևույթին Մովսես Խորենացին է, որից նա մի քանի անգամ վերցրել է բնագրային երկար հատվածներ, նույնիսկ նրա անունը տալով։ «Մենք ուզում ենք,— ասել է նա,— հայերի թերությունները ցույց տալ պատմությամբ, և մենք ուզում ենք այդ անել ոչ թե մեր հնարանքով նրանց վատաբանելով, այլ մեջ բերելով հենց իրենց պատմագրական գրքից՝ գրված Հայաստանի ժամանակագիր Մովսեսի ձեռքով, որ հայերեն կոչվում է Խորենացի»։ Այդ պարսավաճառի հեղինակը վկայակոչել է նաև V դարի սկզբի հայ մեծ կաթողիկոս Սահակի տեսիլը։ Այդ տեսիլի հունարեն թարգմանությունը հրատարակել է Գարիտը, որն այդ առթիվ գրել է. «Կասկած չկա, որ թարգմանությունը կամ դրա հայերեն օրինակը V դ. վերջի գրող Ղազար Փարպեցու Պատմության մի հատված է, որովհետև տեսիլն առանձին պատմող ձեռագրերից ոչ մեկը դրան չի կցում այն նախաբան ճառը, որ պատմագիրը վերագրում է ս. Սահակին, սակայն այն առկա է (բացի սկզբից) այդ թարգմանության մեջ (I 1—16). Հունարեն թարգմանությունը հիանալիորեն հարազատ է, հաճախ միանգամայն բառացի, և վերարտադրում է հայերեն բնագրի շարադասությունը»։

Այդ կոնտեքստը, որտեղ այս գրվածքը գտնվում է հակահայկական ուրիշ բնագրերի հետ, ինչպես նաև վրացերեն թարգմանության գոյությունը ցույց են տալիս, որ այն դիտվել է իբրև կրոնական պայքարի զենք. այն պատուհասները, որ ս. Սահակը կանխագուշակում էր իր հայրենակիցներին, «օրթոդոքս բանավիճողների կողմից պետք է շատ պիտանի համարվեին»։ Գրվածքը ծանոթ է եղել Կոստանդին Ծիրանածինին, որը սակայն այն օգտագործել է բոլորովին այլ նպատակով. ինչպես հայտնի է, այն վկայակոչել է իր պապ Վասիլ I-ի Արշակունի ծագումը հաստատելու համար։ «Այս ժամանակ է,— գրում է նա,— որ կատարվեցին այն կանխագուշակությունը և մարգարեությունը, որ 350 տարի առաջ արել էր Իսահակը՝ քահանաներից և կրոնավորներից ամենաշրջահայացը, նա, որ ինքը ևս սերված լինելով Արշակունի ցեղից, տեսիլով իմացել էր, որ նույնքան տարի հետո Արշակունի հետնորդներից մեկը տիրանալու է հռոմեական կայսրության գայիսոնին»։

Ագաթանգեղոսից բացի, այդ երկու գրվածքները միակն են, որոնց մեջ օգտվել են հայ պատմագիրների գործերից։ Հայաստանի մասին բյուզանդացիների ունեցած տեղեկությունները, օրինակ՝ այն, որի մասին վկայում է Կոստանդին Ծիրանածինը «De Administrando Imperio» երկում, բխում էին բյուզանդական դիվանատնից, Հայաստան ուղարկված պատվիրակությունների զեկույցներից կամ հայերի կողմից Բյուզանդիա առաքված պատվիրակություններից։ Այնուհանդերձ պետք է ավելացնել, որ գոյություն ունեն դեռևս անտիպ գործերի հունարեն թարգմանություններ, որոնց ակնարկել է Գարիտը, ավելացնելով, որ երբ այդ ամենը հայտնի դառնա, «խորհելու առիթ կտա և

արգելք կհանդիսանա, որպեսզի չկարծվի, թե հունական աշխարհի և Հայաստանի միջև հարաբերությունները միշտ միակողմանի են եղել»։

Չնայած դրան, ճիշտ է, որ հունարենից հայերեն թարգմանված գործերն ավելի շատ են, քան հայերենից հունարեն թարգմանվածները։ V դարի առաջին կեսում հայերեն այբուբենի ստեղծման հետ սկսած այդ թարգմանությունները շարունակվել են ամբողջ միջնադարում և նույնիսկ հաջորդ դարերում։ Այդ թարգմանություններին նվիրված՝ Գ. Զարբհանալյանի աշխատության մեջ, որ լույս է տեսել 1889 թ., կարելի է հաշվել յոթանասուն հույն հեղինակի անուն, և հետո էլ նշվել են այլ անուններ։ Այդ թարգմանությունները վկայում են լայն ընտրողականության և լայնախոհության մասին. զուտ ծիսական և վարքագրական բնագրերից բացի, գրանցում կան եկեղեցու հայրերի գրվածքներ, փիլիսոփայական երկեր, հատկապես Արիստոտելի և նեոպլատոնականների երկեր, գիտական աշխատություններ և աշխարհիկ բնույթի գրվածքներ, ինչպես «Ստոյն Կալիսթենեսի Պատմութիւնն վարուց և գործոց Աղեքսանդրի»։

Այդ թարգմանություններից մի քանիսը դարձել են նորագույն ուսումնասիրությունների նյութ, տպագրվել և ուսումնասիրվել են անտիպ մնացած բնագրեր։ Այդպիսին են Լ. Խաչիկյանի, Հ. Մանանդյանի հրատարակությունները, նեոպլատոնականների գործերի խմբին պատկանող փիլիսոփայական անանուն երկու կարճ գրվածք, որոնց մասին հայտնել է Ս. Արևշատյանը։ Մյուս կողմից՝ Հիպոլիտոս Հռոմայեցու և Իրինեոս Լուգդունացու գրվածքների հայերեն թարգմանությունները հրատարակվել և ուսումնասիրվել են Մերսիեի և Ֆրուադըվոյի կողմից՝ թե՛ անհետացած հունարեն բնագրերը փոխարինելու և թե՛ որպես ստուգման միջոց։ Դրանք մի օրինակ են այն նպաստի, որ կարող են տալ հին թարգմանությունները։

Թարգմանված միակ պատմագիրներն են՝ Եվսեբեոս Կեսարացին՝ նրա «Պատմութիւն եկեղեցականը» և «Քրոնիկոնը», որի առաջին մասը ծանոթ է միայն հայերեն թարգմանությամբ, և Սոկրատը, որից երկու թարգմանություն կա։ Միջնադարյան պատմագիրներն օգտագործել են նաև հունարենից թարգմանված ժամանակագրական երկու ցուցակ։ Սակայն քանի որ հայերը երբեմն ճշգրտորեն են տեղյակ բյուզանդական պատմության իրադարձություններին, ուստի կարելի է ենթադրել, որ նրանք ունեցել են նաև տեղեկատու այլ աղբյուրներ։ Համենայն դեպս, եթե նկատի առնենք բազմաթիվ հայերեն թարգմանությունները, ապա հետաքրքրական է, որ բյուզանդացի ոչ մի պատմագիր չի թարգմանվել։ Միայն XVII դ. պոլսեցի մի հայ՝ Մելիքսեթը, թարգմանել է XV դարի պատմագիր Գեորգիոս Ֆրանցեսի «Ժամանակագրությունը»։ Այգ թարգմանությունը, որ դեռ անտիպ է, հայտնաբերել է Հ. Անասյանը։ Նույնքան հետաքրքրական է, որ XI դարի մեծ գիտուն և հելլենագետ Գրիգոր Մագիստրոսը ոչ մի բյուզանդացի հեղինակ չի հիշատակել։ Նրա մեծածավալ «Թղթերում», որոնց խոր ուսումնասիրությունը դեռ կատարված չէ, շարունակ նշվում են հին գրողների անունները՝ Հոմերոսից սկսած. և նրա թարգմանած գործերն են Պլատոնի տրամախոսությունը և Եվկլիդեսի Երկրաչափությունը։ Դժվար է պատկերացնել, թե բյուզանդական այս բարձրաստիճան գործիչը, որ երկար ժամանակ ապրել է Կ. Պոլսում և սիրված է եղել Կոստանդին Մոնոմախոս կայսեր կողմից, տեղյակ չի եղել իրեն ժամանակակից բյուզանդացիների աշխատանքներին։ Սակայն նրա մեծ հետաքրքրասիրությունը դեպի փիլիսոփայությունը և գիտությունները, թերևս նաև գիտնականին հատուկ որոշ նալանք

պատճառ են դարձել, որ նա խոսի միայն հունական հին դրական գործերի մասին։ Բոլորովին այլ է եղել նրա որդու՝ ապագա Գրիգոր կաթողիկոսի հետաքրքրասիրությունը. հայրը հոգացել է նրան փիլիսոփայական կրթություն տալու։ Իր իսկ թարգմանությունները, կամ նրանք, որ նա կատարել է տվել իր աշակերտներին, վարքագրական գործեր են, որոնց շնորհիվ նրան տրվել է «Վկայասեր» մակդիրը։ Հաջորդ դարերի թարգմանությունները ևս մեծ մասամբ կրոնական բնույթի գործեր են, սակայն փիլիսոփայական գործերի նկատմամբ հետաքրքրասիրությունը դրանով չէր անհետացել։ Այդ են հաստատում Արիստոտելի գրվածքների բազմաթիվ ընդօրինակությունները (կարծեմ Մատենադարանն ունի 300-ից ավելի), դրանց մեկնաբանություններր հայ փիլիսոփաների կողմից։

Երբ փորձում ենք մի քանի բառով բնորոշել երկու երկրների գրական փոխանակումների բնույթը, ապա նկատում ենք, որ բյուզանդական կողմից թարգմանությունների մեծ մասր կատարվել է որոշակի նպատակով, այն է՝ պայքարի միջոցներ ընտրել իրենց կրոնական պրոպագանդայի համար։ Հայերի կողմից գերիշխում է մշակութային բնույթը։ Նրանք հետամուտ են եղել այնպիսի աշխատությունների, որոնք կարող էին հարստացնել կրոնական և մտավոր գանձարանը, սակայն դրանք հունական հնագույն շրջանի և վաղ միջնադարի ստեղծագործություններ են, և վերջին հաշվով աղերսակցությունը ժամանակակից բյուզանդական մտքի հետ փոքր է։ Այդ տեսակետից միանգամայն նշանակալից է, որ թեև եկեղեցու հայրերի գրվածքների մեծագույն մասր թարգմանվել է հայերեն, սակայն հայերին քաջ հայտնի Փոտի ճառերի հայերեն ոչ մի թարգմանություն չունենք։

Առաջադրվող ընդհանուր խնդիրներից մեկն այն է, թե բյուզանդական կայսրության հայերը որքանով էին հունականացել։ Խնդիրն անշուշտ տարբեր բնույթ է ստանում ըստ մարդկանց դասերի, խմբակցությունների կարևորության և ըստ այն բնակավայրերի, որ նրանք հաստատվել են։ Հաստատ է, որ հայկական ծագում ունեցող կայսրերը, կառավարման բարձրաստիճան պաշտոնյաները կամա թե ակամա միաբանել էին օրթոդոքս եկեղեցուն։ Այս բազմացեղ կայսրության մեջ ազնվականներն ու նրանց որդիները վերջիվերջո իրենց համարել են բյուզանդացիներ, թեև այն փաստը, որ նրանք հորից որդի կոչվել են հայկական անուններով, ցույց է տալիս, որ նրանք անպայման ուզում էին պահել գոնե իրենց ծագման հիշատակը։ Սակայն բոլորովին այլ պետք է լիներ գաղթականների մեծ զանգվածը, որոնք անտարակույս ապրում էին որոշակի համայնքների մեջ խմբավորված և շարունակում էին հայերեն խոսել։ Վարքագրական պատմվածքներում պահպանվել է հին ժամանակ Պաղեստինում բնակվող այդ համայնքներից մի քանիսի հիշատակը։ «Հորդանանի անապատում, Սուբերայի Ս. Թեոդորոսի վանքում հայերն իրենց լեզվով էին երգում ժամերգությունը՝ իրենց համար կառուցված մի մատուռի մեջ»։ Մոտ 530 թ. Թեոդորոս Կենոբիարքոսը Հորդանանի մոտ գտնվող իր վանքում կառուցել էր երեք եկեղեցի, որտեղ հայերը, պարսիկները և հույները ժամերգությունն առանձին էին կատարում՝ ամեն մեկն իր լեզվով։ Ս. Սաբասն իր վանքի մի մասր հատկացրել էր հայերին, որտեղ մի փոքրիկ աղոթարանում շաբաթ և կիրակի հայերեն ժամասացություն էր կատարվում։ Հայերեն մի բնագրում հիշատակվում են բազմաթիվ վանքեր Երուսաղեմում, և այդ եկե-

վեցիներից մի քանիսի հայերեն արձանագրություններով խճանկար հատակները պահպանվել են մինչև օրս։

Նույնպիսի տեղեկություններ չունենք Կ. Պոլսի մասին։ Բավականին որոշակի չեն այն տեղեկությունները, որ գտնում ենք VI դարի ասորի հեղինակ Հովհաննես Եփեսացու եկեղեցական պատմության մեջ՝ նախարարների, կաթողիկոսի և շատ ուրիշների մասին, որոնք Կ. Պոլիս էին ապաստանել 572 թ. պարսիկների դեմ իրենց ապստամբությունից հետո։ Չի կարելի հավատ ընծայել հետագայում Միքայել Ասորու գրածին, թե այն նույն հայերը, բաժանվելով հույներից, որոնց միացել էին, առանձին խմբավորվել են վանքերում. բյուզանդացիները դժվար թե մայրաքաղաքում իսկ թույլատրեին ոչ ուղղափառ վանքեր։ Սակայն կարևոր է իմանալ ոչ թե հայերի՝ իրենց եկեղեցուն հավատարիմ մնալը կամ ոչ, այլ այն, թե նրանք խմբավորվա՞ծ էին արդյոք շրջաններում, որտեղ պահպանվում էին հայոց լեզուն և մշակույթը։ Այս առթիվ կարելի է վկայակոչել երկու ձեռագիր։ Առաջինը հենց այստեղ՝ Մատենադարանում պահվող հայերեն մի ավետարանագիրք է, որ 909 թ. գրչագրվել է Կ. Պոլսում. դա ապացուցում է, որ X դարի սկզբում այնտեղ գոյություն ուներ եթե ոչ գրչատուն, գոնե բավականաչափ վարպետություն ունեցող մի գրիչ, որ կարողացել է գեղեցիկ երկաթագրով ձեռագիր ընդօրինակել։ Երկրորդ վկայությունը մեզ ընծայում է 991 թ. Կ. Պոլսում գրված և ավելի ուշ շրջանի գրչագրությամբ պահպանված մի ձեռագրի հիշատակարան (Վիեննա, № 1048)։ Ձեռագիրը Վարք սրբոց է, մի հույն «Տաւնացոյցից» թարգմանված, և թարգմանիչը հետևյալ կերպ է խոսում իր մասին. «Ես՝ անարժան և տգէտ և մեղաւոր թարգմանիչս Յովսէփ ծնեալ և սնեալ և ծերացեալ յաստուածապահ քաղաքիս Կոստանդնուպաւղիս և զհայրենի լեզու և զգիր ի տեղիս ուսեալ, ի միոյ հոոոմ Տաւնացոյցէ թարգմանեցի... ի թարգմանական բարբառին... և յուղարկեցի ի հայոց եկեղեցիս»։ Այսպիսով տեսնում ենք, որ Կ. Պոլսում առնվազն երկրորդ սերնդի մի հայ գտել է միջավայր, որտեղ կարողացել է սովորել թե՛ հայոց լեզուն և թե՛ գրչության արվեստը։ Բացի այդ, այս աշխատանքը տարբերվում է հունարեն աշխատությունների մյուս բոլոր թարգմանություններից, քանի որ կատարողն այնպիսի մարդ է, որ նախ՝ հունական կրթություն է ստացել և միայն հետագայում է սովորել հայերեն։ Հովսեփ թարգմանիչը հավանաբար պետք է ողղափառ դավանության պատկաներ, քանի որ նա պահել է Ծննդյան տոնի 25 դեկտեմբեր ամսաթիվը, փոխանակ հունվարի 6-ի, ինչպես հայոց եկեղեցում. սակայն XI դ. Կ. Պոլսում դեռևս շատ կային ազգային եկեղեցուն հավատարիմ մնացած հայեր։ Այդ կարող ենք եզրակացնել Աննա Կոմնենայի խոսքերից, որն իր «Ալեքսիականում» այն ժամանակ մեծ աղմուկ հանած Նիլոսի աղանդի մասին խոսելիս գրում է, թե Նիլոսը «անդադար զրույցներ էր ունենում Տիգրանի և Արշակի հետ» և ավելացնում է. «Նիլոսի վարդապետությունը նրանց ավելի է ամրապնդում ամբարշտության մեջ»։ Արդ, բյուզանդացիների համար «ամբարշտություն» նշանակում է չընդունել Քաղկեդոնի ժողովի դավանանքը։

Ավելի շատ տեղեկություններ ունենք այն հայերի մասին, որոնք բուլղարների դեմ Վասիլ II-ի տարած հաղթանակներից հետո հաստատվել են Բյուզանդիայի վերագրաված հողերում, և այստեղ ուզում եմ խոսել միայն նրանց մասին, որոնք պավլիկյաններ չէին։ Առաջին հերթին դարձյալ վկայակոչում եմ մի ձեռագիր, շատ գեղեցիկ մի ավետարան, որ 1107 թ. Ադրիանուպոլսում

ընդօրինակվել և նկարազարդվել է Թեոդորական դքսի պրոքսիմոս կամ փոխանորդ պրոտոսպաթար Հովհաննեսի համար, որ եղել է Ֆիլիպուպոլսի կառավարիչ և կայսերական կառավարման մեջ պատկանելիս է եղել բարձրաստիճան պաշտոնյաների մի ընտանիքի։ Ուրեմն հայ-բյուզանդական բարձրաստիճան պաշտոնյան ոչ միայն ցանկացել է անպայման ունենալ հայերեն ավետարան, այլև կարողացել է գտնել իր պատվեր կատարելու, ձեռագիրը մանրանկարներով և պատվիրատուի դիմանկարով զարդարելու ընդունակ մի հայ գրիչ։ Ի միջի այլոց, ասենք, որ ձեռագրի նկարազարդումը գեղարվեստական երկու հոսանքների խաչաձևման հետաքրքրական մի օրինակ է և որոշ չափով արտացոլում է այդ հայ-բյուզանդական հասարակության բնույթը, որովհետև ավետարանիչների դիմանկարներում երևան են գալիս բյուզանդական նկարչության ազդեցությունը, իսկ զարդանկարները կատարված են զուտ հայկական ոճով։

Իսահակ Անգելոսի նամակը և Նիկետաս Խոնիատեսի անտիպ գրվածքը, որ հիշատակեցինք վերևում, լրացուցիչ տեղեկություններ են տալիս Ֆիլիպուպոլսի հայերի մասին։ Արդեն հայտնի էր, որ այդ քաղաքում մի հայ վանք է եղել, հավանաբար ուղղափառ հնազանդությամբ, քանի որ աբբահայրը՝ Հովհաննես Ութմանը 1170 թ. Մանուել կայսրի պատվիրակ մագիստրոս Թեոդորիանոսին ուղեկից է նշանակվել՝ Ներսես Շնորհալու հետ կրոնական բանակցություններ վարելու համար։ Սակայն Իսահակ Անգելոսի և Նիկետաս Խոնիատեսի գրվածքները ապացուցում են, որ բնակչության մեծ մասը հավատարիմ էր մնացել ազգային եկեղեցուն. հենց սրանք էին ենթարկվում հալածանքների, որոնց դեմ բողոքում էր կաթողիկոսը. սակայն կայսրը բողոքներից պաշտպանվել է պատճառաբանելով, թե հայերն իրենց կամքով էին դարձի գալիս։ Բացի այդ, ակնհայտ է, որ այդ հայերը պավլիկյաններ չէին, թե ոչ կաթողիկոսը նրանց վիճակով այդքան չէր մտահոգվի։ Մյուս կողմից՝ Ֆիլիպուպոլսի բնակչության մասին խոսելիս Աննա Կոմնենան առանձին հիշատակում է հայերին, բոգոմիլներին և պավլիկյաններին։ Ըստ Նիկետաս Խոնիատեսի, այդ նույն հայերն էին մնացել Ֆիլիպուպոլսում, երբ 1189 թ. Ֆրեդերիկ Շիկամորուսը գրավել է քաղաքը, և ուրախությամբ են ընդունել նրան՝ իրենց դավանանքի աղերսակցության պատճառով։

Կայսրության հողերում հայ համայնքների գոյության մասին կարելի է գտնել, անշուշտ, այլ վկայություններ։ Պաշտոնական պատմագրությունը, որ մտահոգված է այս աշխարհի մեծամեծների գործերի նկարագրությամբ, հազվադեպ է զբաղվում համեստ միջավայրի մարդկանցով, մանավանդ եթե նրանք չեն մասնակցել քաղաքական իրադարձություններին։ Վարքագրական աղբյուրները երբեմն ավելի հարուստ են այս կարգի տեղեկություններով։ Հ. Պետերսը հրատարակել է մի հայ սրբուհու վարքը. Վասիլ I-ի կայսրության օրոք նա ծնողների հետ եկել է Կ. Պոլիս, ամուսնացել է հույնի հետ և բնակություն հաստատել Թրակիայում, որտեղ և մահացել է 902 թ.։ Հ. Բարթիկյանը ուշադրություն է հրավիրել VIII դարի պատկերամարտ Ստեփանոս Նորավկայի վարքի մի հատվածի վրա, որտեղ խոսվում է Թրակիայում հաստատված հայ զինվորների մասին։ Որպես օրինակ կարելի է նշել նաև Ղազար Գազելիոտեսի վարքը, որտեղ խոսվում է Եփեսոսի շրջանի հայ վաճառականների և նավաստիների մասին, որոնք XI դ. շարունակում էին հայերեն խոսել։ Նույն բնույթի գրվածքների կանոնավոր հետազոտությունը շատ հավանաբար

գնահատելի լրացուցիչ տեղեկություններ կտա կայսրության հայ բնակչության վերաբերյալ։

Այս ընդհանուր ուրվագծի մեջ հնարավոր չէր նկատի առնել Բյուզանդիայի և Հայաստանի հարաբերությունների բոլոր կողմերը, ոչ էլ նշել բոլոր աշխատությունները՝ գրքեր և հոդվածներ, որտեղ քննարկված են այդ հարցերը։ Ես ուզեցի պարզապես ներկայացնել արդեն կատարված և հետագայում կատարելի աշխատանքի ընդհանուր պատկերը։

Ֆրանսերենից թարգմանեց Մ. ՄԻՆԱՍՅԱՆԸ